ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

«12» հունվարի 2016 թվականի N: 6-Ա ք.Գյումրի

ԱՍՏՂԻԿ ՍԱՐԻԲԵԿՅԱՆԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ՀԱՑԻԿԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆՈՒՄ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 95-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի հուլիսի 25-ի N1392-Ն որոշմամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության 46-րդ կետի 2-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 4-ի N 319-Ն որոշմամբ հաստատված «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության տնօրենի ընտրության (նշանակման)» կարգի 34-րդ կետի դրույթներով, և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության խորհրդի 2015 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի թիվ 5 արձանագրությունը և Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության ներկայացուցչի դրական եզրակացությունը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

Աստղիկ Սարիբեկյանին նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Հացիկի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պաշտոնում և նրա հետ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել աշխատանքային պայմանագիր՝ 5 տարի ժամկետով:

Ֆ.ՅՈԼԱԿՅԱՆ

Իսկականի հետ ճիշտ է՝